

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ
ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Իսրայելի Պետության Կառավարությունը,

ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար Պայմանավորվող Պետության ընկերության, ընկերակցության, տրաստի կամ այլ ընկերության եկամուտները, որոնք Պայմանավորվող Պետություններից մեկի հարկային օրենսդրությամբ մասամբ կամ ամբողջությամբ համարվում են հարկային առումով թափանցիկ, կդիտարկվեն որպես Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտներ, բայց միայն այն չափով, որքանով, այդ Պետության կողմից հարկման նպատակներից ելնելով, այդ եկամուտները համարվում են այդ Պետության ռեզիդենտի եկամուտներ:

Հոդված 2

ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա տեղական իշխանության մարմինների անունից գանձվող եկամտի և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտի և գույքի հարկեր են համարվում ընդհանուր եկամտից, ընդհանուր գույքից կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից գանձվող հարկերը, ինչպես նաև գույքի արժեքաճի վրա տարածվող հարկերը:

3. Գոյություն ունեցող հարկերը, որոնց նկատմամբ Կոնվենցիան կիրառվում է, մասնավորապես, հետևյալն են.

ա) Իսրայելում՝

i) եկամտահարկ և ընկերության հարկ (ներառյալ գույքի արժեքի հավելածի հարկը),

ii) Անշարժ գույքի հարկման օրենքի համաձայն՝ գույքի օտարումից ստացված եկամուտներից հարկ,

(այսուհետև՝ իսրայելական հարկ),

բ) Հայաստանում՝

i) շահութահարկ

ii) եկամտային հարկ,

iii) գույքահարկ,

(այսուհետև՝ հայկական հարկ),

4. Կոնվենցիան կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ դրանց էապես նման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները միմյանց կձանուցեն

իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

Հոդված 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Իսրայել» տերմինը նշանակում է Իսրայելի Պետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, որտեղ Իսրայելի Պետության Կառավարությունն ունի հարկման իրավունքներ, ներառյալ նրա տարածքային ծովը, ինչպես նաև տարածքային ծովի արտաքին սահմանին հարող ծովային տարածքները, այդ թվում՝ դրանց հատակն ու ընդերքը, որոնց նկատմամբ Իսրայելի Պետությունն իրականացնում է իր ինքնիշխան կամ այլ իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն միջազգային իրավունքի և Իսրայելի պետության օրենքների.

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքները, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի.

գ) «Պայմանավորվող Պետություն» և «մյուս Պայմանավորվող Պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Իսրայել.

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ.

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող վայրերի միջև.

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Իսրայելի դեպքում՝ ֆինանսների նախարար կամ նրա լիազորած ներկայացուցիչ,

ii) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարություն և պետական եկամուտների կոմիտե կամ նրանց լիազորած ներկայացուցիչներ,

ժ) «ազգային անձ» տերմինը Պայմանավորվող Պետության առնչությամբ նշանակում է.

i) Պայմանավորվող Պետության քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձ, և

ii) Պայմանավորվող Պետության գործող օրենքների հիման վրա իր, որպես այդպիսին, կարգավիճակն ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա,

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը նշանակում է՝ մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեությունների իրականացում,

ժբ) «կենսաթոշակային պլան» տերմինը նշանակում է՝ որևէ ծրագիր, սխեմա, հիմնադրամ, տրաստ կամ այլ մեխանիզմ՝ ստեղծված Պայմանավորվող Պետությունում, որը.

i) ընդհանուր առմամբ ազատված է այդ Պետությունում եկամտի հարկումից,
և

ii) հիմնականում գործում է կենսաթոշակը կամ կենսաթոշակային նպաստները, աշխատողների կամ անհատ ձեռնարկատերերի նպաստները տնօրինելու կամ տրամադրելու համար, կամ մեկ կամ ավելի նման կարգավորումների օգտին եկամուտ ստանալու համար:

2. Ինչ վերաբերում է Պայմանավորվող Պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելուն, ապա դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստից այլ բան չի բխում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին, տվյալ Պետության օրենսդրության համաձայն, այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան, այդ Պետության կիրառելի հարկային օրենքներով տրված ցանկացած նշանակություն, որը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով տերմինին տրված նշանակության նկատմամբ:

Հոդված 4

ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենքների համաձայն, ենթակա է հարկման ըստ իր բնակության, ռեզիդենտության, կառավարման վայրի, ինկորպորացիայի վայրի կամ ցանկացած այլ համանման չափորոշիչի, և ներառում է նաև այդ Պետությունը և նրա ցանկացած տեղական իշխանության մարմինը: Սակայն այս տերմինը չի ներառում որևէ անձի, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ է, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա չի բնակվում դրանցից ոչ մեկում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի ազգային անձն է,

դ) եթե նա երկու Պետությունների ազգային անձ է կամ դրանցից ոչ մեկում այդպիսին չէ, Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ է, ապա իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ պետք է փորձեն պարզել, թե սույն Կոնվենցիայի նպատակների համար ո՞ր Պայմանավորվող Պետության ռեզիդենտ կհամարվի տվյալ անձը՝ հաշվի առնելով նրա փաստացի կառավարման վայրը, այն վայրը, որտեղ նա գրանցված է կամ, այլ կերպ է ստեղծվել, և այլ համանման գործոններ: Փոխադարձ համաձայնության չգալու դեպքում այդ անձը իրավունք չունի պահանջելու սույն Կոնվենցիայով նախատեսված ցանկացած հարկի զիջում կամ դրանից ազատում:

Հոդված 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը մասնավորապես ներառում է.

ա) կառավարման վայր,

բ) մասնաճյուղ,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արհեստանոց և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանք, քարհանք կամ բնական պաշարների ոսումնասիրման, արդյունահանման կամ շահագործման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը դիտարկվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակը, ծրագիրը կամ գործունեությունը շարունակվում են 9 ամսից ավելի ժամանակահատվածով:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների պաշարների կամ արտադրանքի պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների պաշարների կամ արտադրանքի պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ ձեռնարկության համար տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ չհանդիսացող անձը, որին վերաբերում է 6-րդ կետը, գործում է Պայմանավորվող Պետությունում ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար իրականացնում է պայմանագրեր կնքելու իրավասություն այդ ձեռնարկության անունից, այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը եթե իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության՝ այդ կետի դրույթների համաձայն:

6. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող Պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, ընդհանուր

հանձնակատարի գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործեն իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), այդ ընկերություններից որևէ մեկին ինքնին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

Հոդված 6

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող Պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Տերմինն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույք ձեռք բերելու ցանկացած տարբերակ կամ համանման իրավունք, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների, աղբյուրների և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները. նավերը, օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացած եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՇԱՀՈՒՅԹ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա շահույթը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում մշտական հաստատությանը վերագրելի չափով՝ 2-րդ կետի դրույթներին համապատասխան:

2. Սույն հոդվածի և 22-րդ հոդվածի նպատակներով՝ յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության՝ 1-ին կետում նշված մշտական հաստատությանը վերագրելի համարվում են ստացման ենթակա շահույթներ են համարվում, մասնավորապես՝ այդ ձեռնարկության այլ հատվածների հետ իր հարաբերություններում, եթե այն եղել է առանձին և անկախ ձեռնարկություն՝ նույն կամ համանման պայմաններում նույն կամ համանման գործունեության իրականացնելիս՝ հաշվի առնելով այդ ձեռնարկության կատարած գործողությունները, օգտագործած ակտիվները և ստանձնած ռիսկերը՝ մշտական հաստատության միջոցով և այդ ձեռնարկության այլ մասերի միջոցով:

3. Այն դեպքում, երբ, համաձայն 2-րդ կետի, մի Պայմանավորվող Պետությունը հաշվարկում է շահույթները, որոնք վերաբերում են Պայմանավորվող Պետությանններից որևէ մեկի ձեռնարկության մշտական հաստատությանը, և,

համապատասխանաբար, հարկում է այդ ձեռնարկության շահույթը, որը հարկվել է մյուս Պետությունում, այդ մյուս Պետությունը, այնքանով, որքանով անհրաժեշտ է այս շահույթների կրկնակի հարկումը բացառելու համար, պետք է կատարի այդ շահույթներից գանձված հարկի գումարների համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտում կատարելիս Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում միմյանց հետ կխորհրդակցեն:

4. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին կարգավորվում են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորմանը, համատեղ գործունեությանը կամ միջազգային գործակալությանը մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին այդ պայմանների բացայակության դեպքում, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև են, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդպիսի շահույթից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը կատարելիս հաշվի կառնվեն սույն Կոնվենցիայի այլ դրույթները, և Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են նաև հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է համարվում շահաբաժիններ վճարող ընկերությունը, և, այդ Պետության օրենքների համաձայն, սակայն, եթե

այդ շահաբաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ապա այդ դեպքում գանձվող հարկը չի կարող գերազանցել.

ա) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետությունն է կամ այդ մյուս Պայմանավորվող Պետության կենտրոնական բանկը կամ կենսաթոշակային պլանը, որը այդ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտն է և ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի տնօրինում շահաբաժինները վճարող ընկերության բաժնետիրական կապիտալի ավել քան 25 տոկոսը կամ չունի 25 տոկոս ձայնի իրավունք,

բ) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը ընկերություն է (ոչ ընկերակցություն կամ անշարժ գույքի ներդրումային ընկերություն), որը ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության բաժնետիրական կապիտալի առնվազն 25 տոկոսը,

գ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Սույն կետը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող անշարժ գույքի ներդրումային հիմնադրամի կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին կատարված բաշխումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում: Այնուամենայնիվ, այդպիսի բաշխումները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ բաշխումներ կատարող անշարժ գույքի ներդրումային հիմնադրամը ռեզիդենտ է և այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե այդ բաշխման փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է և անմիջականորեն տնօրինում է այդ անշարժ գույքի ներդրումային հիմնադրամի կապիտալի 10%-ից պակասը, այդ գանձված հարկը չպետք է գերազանցի բաշխման համախառն գումարի 15% -ը:

Սույն կետը չի ազդում անշարժ գույքի ներդրումային հիմնադրամի այն շահույթի հարկման վրա, որից բաշխումները կատարվում են:

4. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից, «ժուխասնս» բաժնետոմսերից կամ «ժուխասնս» իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որոնք ենթակա են հարկային կարգավորման այնպես, ինչպես ենթակա է կարգավորման բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտ է բաշխում կատարող ընկերությունը:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը կամ անշարժ գույքի ներդրումային հիմնադրամի կատարած բաշխումների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, կամ բաշխումներ է կատարող անշարժ գույքի ներդրումային հիմնադրամը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները կամ կատարվում են բաշխումները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե

անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Սույն կետը կիրառվում է նաև անշարժ գույքի ներդրումային ընկերության կողմից կատարված բաշխումների համար:

Հոդված 11

ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն մի Պայմանավորվող Պետությունում առաջացող տոկոսները կարող են նաև հարկվել այդ Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող Պետությունում առաջացող տոկոսներն այդ Պետությունում ազատվում են հարկից, եթե այն վճարվում է.

ա) Պայմանավորվող Պետության Կառավարությանը, նրա տեղական իշխանության մարմնին կամ կենտրոնական բանկին,

բ) Պայմանավորվող Պետության Կառավարության, նրա տեղական իշխանության մարմնի կամ կենտրոնական բանկի կողմից:

4. «Տոկոսներ» տերմինը սույն Հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բոլոր տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոտեկային ապահովումից և պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի

արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող՝ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 12 ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են, այդ Պետության օրենքներին համապատասխան. բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի.

ա) ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը՝ 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված տեսակի վճարումների դեպքում,

բ) ռոյալթիների համախառն գումարի 10 տոկոսը՝ 3-րդ կետի «գ» ենթակետերում նշված տեսակի վճարումների դեպքում:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ ստացած ցանկացած տեսակի վճարում՝

ա) ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի կամ գծագրի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար,

բ) ցանկացած գաղտնի բանաձևի կամ գործընթացի, արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության (նոու-հաու) օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար,

գ) գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ՝ կինոնկարների կամ ռադիո- կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ոռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են ոռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ոռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողը այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն, երբ ոռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ոռոյալթիներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ոռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ոռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ոռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտները՝ ստացված մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող Պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելվածը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող Պետությունում:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելվածը ստորև նշվածի օտարումից՝

ա) բաժնեմասեր, որոնց արժեքի 50 տոկոսից ավելն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է մյուս Պետությունում գտնվող անշարժ գույքից (օտարման պահին կամ ցանկացած պահին նախորդող տասներկուամսյա ժամանակահատվածում), կամ

բ) ընկերակցությունից, տրաստից կամ այլ ընկերությունից ստացված տոկոսներ, որոնց արժեքի 50 տոկոսից ավելն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է մյուս Պետությունում գտնվող անշարժ գույքից (օտարման պահին կամ ցանկացած պահին նախորդող տասներկուամսյա ժամանակահատվածում),

կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է օտարող անձը, եթե այդ ռեզիդենտը օտարված գույքի փաստացի սեփականատերն է ամբողջ ժամանակահատվածի համար, որի համար հաշվարկվում է կապիտալի շահույթը:

6. Այն դեպքում, երբ անձը եղել է մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ և դարձել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, 5-րդ կետը չպետք է խոչընդոտի հարկել առաջինը նշված Պետությունում ռեզիդենտության փոփոխության պահին այդ անձի գույքի արժեքի հավելանք՝ իր ներքին օրենսդրության համաձայն: Նման գույքի հետագա օտարման դեպքում այդ գույքի նկատմամբ մինչև բնակության վայրի փոփոխության ժամանակը ստացված եկամուտները չեն հարկվում մյուս Պետությունում: Այս դեպքում կապիտալի հավելանքը պետք է հարկվի համամասնորեն, երկու Պայմանավորվող Պետությունների կողմից՝ ըստ օտարողի՝ յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում ռեզիդենտ լինելու ժամանակահատվածի:

Հոդված 14

ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի կատարվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը կատարվում է այդպես, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում կատարվող վարձու աշխատանքի

դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և

բ) վարձատրությունը կատարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում կատարվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ Պայմանավորվող Պետությունում:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված հատուցումից ստացված եկամուտը՝ երկու Պայմանավորվող Պետություններում անցյալում կատարված աշխատանքների համար, ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում՝ ըստ այդ Պետությունում վարձու աշխատանքի ժամանակահատվածի:

Հոդված 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ իր իրավասության ներքո ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 16

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող Պետությունում որպես արվեստագետ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստագետի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստագետին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստագետի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ որպես արվեստագետ կամ մարզիկ իր անձնական գործունեությունից ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ գործունեությունն իրականացվում է մյուս Պայմանավորվող Պետությունում և ամբողջությամբ կամ հիմնականում աջակցվում է առաջինը նշված Պայմանավորվող Պետության կամ նրա տեղական իշխանության մարմնի հանրային միջոցներից:

Հոդված 17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հաշվի առնելով 18-րդ Հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին նախկինում կատարած վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 18

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող Պետության կամ նրա տեղական իշխանության մարմնի կողմից այդ Պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձերը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձերը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ ֆիզիկական անձը.

i) այդ Պետության քաղաքացի է կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ նրանց կողմից ստեղծված միջոցներից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ մարմնին մատուցվող ծառայությունների առնչությամբ ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները և այլ նմանատիպ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը և այլ նմանատիպ վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պայմանավորվող Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վճարվող

աշխատավարձի, ոռճիկի, կենսաթոշակների և համանման այլ հատուցումների նկատմամբ:

Հոդված 19

ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

1. Այն ֆիզիկական անձը, ով այցելել է Պայմանավորվող Պետություններից որևէ մեկը երկու տարին չգերազանցող ժամանակահատվածով՝ այդ Պետության համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցման կամ հետազոտմամբ զբաղվելու նպատակով, և ով մինչև անմիջապես ժամանելը եղել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, այդ նպատակով առաջինը նշված Պայմանավորվող Պետություն առաջին անգամ մուտք գործելու օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածով կազատվի հարկումից այդ Պայմանավորվող Պետությունում այդպիսի ուսուցանման կամ հետազոտման համար տրվող վարձատրության առնչությամբ:

2. 1-ին կետի համաձայն՝ հետազոտության համար ստացված ցանկացած վարձատրության նկատմամբ ազատում չի կիրառվում, եթե այդպիսի հետազոտությունն իրականացվում է ոչ թե հասարակական շահի, այլ հիմնականում որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 20

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող Պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը նշված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, չի հարկվում այդ առաջինը նշված Պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու նպատակով ստացած հետևյալ վճարումների կամ եկամուտների առնչությամբ:

ա) վճարումներ, որոնք ստացվում են այդ Պայմանավորվող Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից՝ իր ապրելու, ուսանելու, մասնագիտանալու, հետազոտելու կամ վերապատրաստվելու նպատակով,

բ) Կառավարության կամ համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ որևէ այլ հավատարմագրված ուսումնական հաստատության կողմից տրվող դրամաշնորհներ, կրթաթոշակներ կամ մրցանակներ՝ ապրելու, ուսանելու, մասնագիտանալու, հետազոտելու կամ վերապատրաստվելու նպատակով:

Հոդված 21 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չնշված եկամտի տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում բացի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ եթե Պայմանավորվող Պետության ռեզիդենտը, ով մյուս Պայմանավորվող Պետության աղբյուրներից ստանում է եկամուտներ վիճակախաղերի, խաչբառերի, ձիարշավների, խաղաքարտերի կամ ցանկացած այլ խաղերի կամ դրամախաղերի կամ ցանկացած այլ ձևի ու բնույթի խաղադրույքներից, այդպիսի եկամուտները կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում:

4. Այն դեպքում, երբ 1-ին կետում նշված ռեզիդենտի և մեկ այլ անձի կամ նրանց երկուսի և այլ երրորդ անձի միջև կա հատուկ հարաբերություն, եկամտի գումարը,

որը գերազանցում է այդ կետում նշված գումարը (երթե կա), որը կհամաձայնեցվեր, եթե նման կապ չլիներ, սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջինը նշված գումարների նկատմամբ: Այդ դեպքում եկամտի գերազանցող մասը կլինի հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքների համաձայն՝ սույն Կոնվենցիայի այլ կիրառելի դրույթներին համապատասխան:

Հոդված 22

ԳՈՒՅՔ

1. 6-րդ Հոդվածում նշված Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող Պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող Պետության մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի ու օդանավերի և Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից այդպիսի նավերի ու օդանավերի շահագործման հետ կապված շարժական գույքը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող Պետությունում:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող Պետությունում:

Հոդված 23

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը կբացառվի հետևյալ կերպով.

ա) Երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Իսրայելում, ապա Հայաստանը թույլ է տալիս.

i) այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել Իսրայելում վճարված եկամտահարկին հավասար գումար,

ii) այդ ռեզիդենտի գույքից գանձվող հարկից հանել Իսրայելում վճարված գույքահարկին հավասար գումար:

Այդպիսի նվազեցումը ցանկացած դեպքում չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը վերաբերում է, հանգամանքներից կախված, այն եկամտին կամ գույքին, որը կարող է հարկվել Իսրայելում:

բ) Երբ, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատված է հարկումից, ապա Հայաստանը, ամեն դեպքում, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի վրա սահմանվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

2. Իսրայելի դպեքում կրկնակի հարկումը կբացառվի հետևյալ կերպով.

ա) Երբ Իսրայելի ռեզիդենտն ստանում է եկամուտ, որը, համաձայն սույն Կոնվենցիայի դրույթների, կարող է հարկվել Հայաստանում, ապա Իսրայելը (օտարերկրյա երկրներում վճարված հարկերը նվազեցնելու վերաբերյալ Իսրայելի օրենքները չեն ազդում սույն կետում նշված ընդհանուր սկզբունքի վրա) թույլ կտա այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկերը նվազեցնել Հայաստանում վճարված հարկի գումարի չափով:

բ) Սակայն նշված նվազեցումները չեն կարող գերազանցել եկամտահարկի գումարների այն մասը, որը հաշվարկվել էր մինչև նվազեցման տրամադրումը, և վերաբերում են այն եկամտին, որը կարող էր հարկվել Հայաստանում:

3. 1-ին և 2-րդ կետերի նպատակով՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած շահույթները, եկամուտները և օգուտները, որոնք կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում՝ համաձայն սույն Կոնվենցիայի, կհամարվեն մյուս պետության աղբյուրներից առաջացած եկամուտներ:

Հոդված 24

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

1. Պայմանավորվող Պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող Պետությունում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթակա են կամ կարող են ենթակա լինել այդ մյուս Պայմանավորվող Պետության ազգային անձինք:

2. Պայմանավորվող Պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պետությունում այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումից:

3. Սույն Հոդվածը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրել որևէ անձնական արտոնություն, զեղչ և նվազեցում, ինչպիսիք նա շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ, 12-րդ հոդվածի 6-րդ կամ 21-րդ հոդվածի 4-րդ կետերի դրույթները, տոկոսները, ռոյալթին և Պայմանավորվող Պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են հանման այն նույն պայմաններով, որոնցով հանվում են առաջինը նշված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող Պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով պետք է ենթակա լինի հանման այն նույն պայմաններով, որոնցով հանվում է առաջինը նշված Պետության ռեզիդենտի պարտքը:

5. Պայմանավորվող Պետության այն ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է այդ մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պայմանավորվող Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը նշված Պայմանավորվող Պետության այլ նմանատիպ ձեռնարկությունները:

6. Սույն Հոդվածի դրույթները կիրառվում են սույն Կոնվենցիայի 2-րդ Հոդվածում նշված հարկերի նկատմամբ:

Հոդված 25

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պայմանավորվող Պետությունների ներպետական օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը համարում է հիմնավորված, և ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է հարցը լուծել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է

իրագործվի՝ անկախ Պայմանավորվող Պետությունների ներպետական օրենքներում առկա ցանկացած ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն հարթել Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ հակասություն: Նրանք կարող են նաև խորհրդակցել՝ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի նշանակության շուրջ համաձայնության հասնելու նպատակով:

Հոդված 26

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է սույն Կոնվենցիայի դրույթների, կամ՝ Պայմանավորվող Պետությունների կամ նրանց տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված սույն Կոնվենցիայով նախատեսված հարկերի վերաբերյալ ներպետական օրենքների կառավարման և կատարման համար, քանի դեռ հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով:

2. Պայմանավորվող Պետության կողմից՝ 1-ին կետի դրույթի համաձայն ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի՝ այնպես, ինչպես այդ Պետության ներպետական օրենքներին համապատասխան ստացված տեղեկատվությունը, և բացահայտվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են բոլոր տեսակի հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը, կամ վերը նշվածի վերահսկողությանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկատվությունն

օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են տեղեկատվությունը հրապարակել դոնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնելու իր կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) ներկայացնելու տեղեկատվություն, որը հասանելի չէ իր կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնելու տեղեկատվություն, որը բացահայտում է որևէ արտադրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է հանրային կարգին (*ordre public*):

4. Եթե Պայմանավորվող Պետությունը սույն Հոդվածի համաձայն դիմում է տեղեկատվություն ստանալու նպատակով, մյուս Պայմանավորվող Պետությունը պետք է օգտագործի տեղեկատվություն ձեռք բերելու իր միջոցները՝ ստանալու համար պահանջվող տեղեկատվությունը, նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պայմանավորվող Պետությունն իր սեփական հարկային նպատակների տեսանկյունից չունի այդպիսի տեղեկատվության անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ նշվող պարտավորությունը 3-րդ կետով ենթարկվում է սահմանափակման, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող Պետությանը՝ մերժելու տեղեկատվության տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը այդպիսի տեղեկատվության նկատմամբ չունի ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող Պետությանը՝ մերժել տեղեկատվության

տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկատվությանը տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ ֆիդուցիար կարողությունը կամ՝ քանի որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

Հոդված 27

Օգուտների սահմանափակում

1. Չնայած սույն Կոնվենցիայի ցանկացած այլ դրույթի՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտը չպետք է սույն Կոնվենցիայով նախատեսված հարկերից ազատվի կամ ստանա նվազեցում մյուս Պայմանավորվող Պետության կողմից, եթե նման ռեզիդենտի կամ նման ռեզիդենտի հետ այլ փոխկապակցված անձի ստեղծման կամ գոյության հիմնական պատճառը կամ հիմնական պատճառներից մեկը սույն Կոնվենցիայից այնպիսի օգուտներ քաղելն է, որոնք հակառակ դեպքում հասանելի չէին լինի:

2. Սույն Կոնվենցիան չի կարող ազդել ներպետական դրույթների կիրառման վրա՝ հարկերը չվճարելու և հարկումից խուսափելը կանխելու նպատակով՝ կապված ծախսերի նվազեցման և ցանկացած այլ նվազեցման հետ, որոնք առաջանում են մի Պայմանավորվող Պետության և մյուս Պայմանավորվող Պետության ընկերությունների միջև գործարքներում, եթե նման ռեզիդենտների ստեղծման կամ գործարքների իրականացման հիմնական կամ հիմնական պատճառներից մեկը սույն Կոնվենցիայից այնպիսի օգուտներ քաղելն է, որոնք հակառակ դեպքում հասանելի չէին լինի:

Հոդված 28

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներին

միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունները:

ՀՈԴՎԱԾ 29

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում է մյուսին սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իր օրենքով պահանջվող ընթացակարգերն ավարտելու մասին:

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցումներից վերջինի ստացման օրվանից, և նրա դրույթները գործում են.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված գումարների նկատմամբ,

բ) մյուս հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ընկած ժամանակաշրջանի համար գանձվող հարկերի նկատմամբ:

Հոդված 30

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա, քանի դեռ չի դադարեցվել որևէ Պայմանավորվող Պետության կողմից: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարին լրանալու պահից կամ դրանից հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Այդ դեպքում, Կոնվենցիայի գործողությունը կդադարի:

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ստացված գումարների նկատմամբ,

բ) մյուս հարկերի առնչությամբ՝ ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո ընկած ժամանակաշրջանի համար գանձվող հարկերի նկատմամբ:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց Կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Երևան քաղաքում 2017 թվականի հուլիսի 25-ին, որը համապատասխանում է հրեական օրացույցի 5777 թվականի Ավ ամսի 2 օրվան, հայերեն, երբայերեն և անգլերեն լեզուներով, բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իսրայելի Պետության Կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիայի ստորագրման պահին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Իսրայելի Պետության Կառավարությունը համաձայնեցին, որ ներքոշարադրյալ դրույթները կազմում են Կոնվենցիայի անբաժանելի մասը:

1. Ընդհանուր առմամբ.

ա) Համաձայնեցին, որ Կոնվենցիան չի խոչընդոտի Պայմանավորվող Պետությանը՝ կիրառելու իր ներպետական օրենսդրության դրույթները հարկերից խուսափելու և հարկեր չվճարելու նպատակով՝ այն դեպքում, երբ այդ դրույթները օգտագործվում են վիճարկելու այն կարգավորումները, որոնք հանդիսանում են Կոնվենցիայի չարաշահում,

բ) Համաձայնեցին, որ Կոնվենցիան չի խոչընդոտի Պայմանավորվող Պետությանը՝ կիրառելու կապիտալացման կանոնների հետ կապված իր օրենսդրության դրույթները:

2. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ (Ընդգրկված հարկեր).

Համաձայնեցին, որ 3.ա.ի կետում նկարագրված հարկերը ներառում են *Petroleum Profits Taxation Law 5771-2011*-ի շրջանակներում կիրառվող հարկերը:

3. 3-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի առնչությամբ (Ընդհանուր սահմանումներ).

Համաձայնեցին, որ «անձ» տերմինը ներառում է կենսաթոշակային պլանը և տրաստը:

4. 3-րդ հոդվածի 1-ին կետի «Ժբ» (i) ենթակետի առնչությամբ (Ընդհանուր սահմանումներ).

Համաձայնեցին, որ Իսրայելի դեպքում կենսաթոշակային պլանը, որը հավանության է արժանացել Ֆինանսական ծառայությունների վերահսկողության ակտի (Control of Financial Services Act (Provident Funds) 2005) դրույթներին համապատասխան՝ որպես Provident Fund, համարվում է ընդհանուր առմամբ եկամտահարկից ազատված:

5. 4-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ (Ռեզիդենտ).

Համաձայնեցին, որ որոշակի ժամանակահատվածի համար, տրաստի ռեզիդենտության որոշման նպատակով, իրավասու մարմինները հաշվի կառնեն բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ.

ա) տրաստի ստեղծման և խնդրո առարկա ժամանակաշրջանում տրաստի կազմակերպչի ռեզիդենտությունը,

բ) խնդրո առարկա ժամանակաշրջանում տրաստի շահառուների ռեզիդենտության պետությունը,

գ) տրաստի կազմակերպիչների և շահառուների միջև ընտանեկան կապերի գոյությունը, և

դ) տրաստի ակտիվների գտնվելու վայրը:

6. 4-րդ հոդվածի 5-րդ կետի առնչությամբ (Մշտական հաստատություն).

Համաձայնեցին, որ «առաքում» հասկացությունն իր մեջ չի ներառում.

ա) ցանկացած տոնավաճառի ընթացքում ցուցադրված ապրանքների վաճառքը դրա ավարտից հետո,

բ) ապրանքի առաքման համար պահպանվող օբյեկտում վաճառքով զբաղվող ցանկացած խանութ:

7. 10-րդ հոդվածի առնչությամբ (Շահաբաժիններ).

Համաձայնեցին, որ «շահաբաժիններ» տերմինն իր մեջ չի ներառում անշարժ գույքի ներդրումային ֆոնդի կողմից կատարված բաշխումները:

Իսրայելի դեպքում «Անշարժ գույքի ներդրումային ֆոնդի կողմից կատարված բաշխումներ» հասկացությունը նշանակում է՝ Israeli Income Tax Ordinance հոդված 64A3-ի համաձայն անշարժ գույքի ներդրումային ֆոնդի կողմից կատարված բաշխումներ:

«Անշարժ գույքի ներդրումային ֆոնդ» հասկացությունը նշանակում է՝ անշարժ գույքի ներդրումային ֆոնդ՝ համաձայն Israeli Income Tax Ordinance հոդված 64A3-ի:

8. 23-րդ հոդվածի առնչությամբ (Կրկնակի հարկման բացառման ծրագրեր).

ա) Համաձայնեցին, որ Հայաստանը կթույլատրի նվազեցնել Իսրայելում հավելածի մասին օրենքի համաձայն վճարված հարկի գումարը՝ կապված Իսրայելից արտագաղթի արդյունքում օտարելու հետ՝ 13-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

բ) Համաձայնեցին, որ Իսրայելի ռեզիդենտին չի թույլատրվի Իսրայելում նվազեցնել Հայաստանում վճարված գույքահարկը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նվազեցումը պահանջվում է Իսրայելի գույքահարկի դիմաց (Իսրայելի օրենքների համաձայն՝ կապված օտար երկրներում վճարված հարկերի նվազեցման հետ, որը չի ազդի 23-րդ Հոդվածի 2-րդ կետի ընդհանուր սկզբունքի վրա):

Կատարված է Երևան քաղաքում 2017 թվականի հուլիսի 25-ին, որը համապատասխանում է հրեական օրացույցի 5777 թվականի Ավ ամսի 2 օրվան, հայերեն, եբրայերեն և անգլերեն լեզուներով. բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

